

**5.11. Արտակարգ իրավիճակները 2005 թվականին**

Ըստ ՀՀ տարածքային կառավարման նախարարության արտակարգ իրավիճակների վարչության ամփոփ տեղեկատվության, 2005թ. հանրապետության տարածքում գրանցվել է արտակարգ իրավիճակի 2240 դեպք, տուժել է 541 մարդ, նրանցից 195-ը զոհվել են, 342-ը՝ վիրավորվել, 4-ը՝ ժամանակավորապես տարահանվել: Պատճառված վնասը կազմել է 375.4 մլն. դրամ:

Գրանցված արտակարգ իրավիճակների դեպքերի 18.1%-ը բաժին է ընկել տարերային աղետներին, որոնց հետևանքով տուժվել է 8 մարդ (3 զոհ, 5 վիրավոր): Պատճառված վնասը կազմել է 369.6 մլն. դրամ:

**Գրանցված տարերային աղետների քանակի և տուժածների թվաքանակի բաշխվածությունն ըստ տեսակների, 2005թ.**

	Գրանցված դեպքերի քանակը, միավոր	Տուժած մարդկանց թվաքանակը, մարդ		
		ընդամենը	նրանցից	
			զոհվել են	վիրավորվել են
<b>Տարերային աղետներ, ընդամենը</b>	<b>405</b>	<b>8</b>	<b>3</b>	<b>5</b>
այդ թվում				
ուժեղ քամի, փոթորիկ, մրրիկ, պտտահողմ, փոշեփոթորիկ	18	2	-	2
անպրոպ, կայծակ	3	1	1	-
կարկուտ	37	-	-	-
տեղատարափ անձրև	5	-	-	-
սողանք	2	-	-	-
սելավ	15	2	2	-
ծյան առատ տեղումներ, բուք, ձյունահողմ	9	-	-	-
ձնահյուսք	1	2	-	2
անտառային հրդեհ	11	-	-	-
քարաթափվածք	1	-	-	-
համաճարակ բնակչության շրջանում	1	1	-	1
էպիզոտիկա (անասնաճարակ)	2	-	-	-
զետերի վարարումներ և քրիեղեղ	11	-	-	-
երկրաշարժ	4	-	-	-
հացահատիկի դաշտերի և տարածքների հրդեհներ	285	-	-	-

Արտակարգ իրավիճակների դեպքերի 81.9%-ը բաժին է ընկել տեխնածին աղետներին, որոնց հետևանքով տուժել է 533 մարդ (192 զոհ, 337 վիրավոր, 4 ժամանակավորապես տարահանված): Պատճառված վնասը կազմել է 5.8 մլն. դրամ:

**Գրանցված տեխնածին աղետների քանակի և տուժածների թվաքանակի բաշխվածությունն ըստ տեսակների, 2005թ.**

	Գրանցված դեպքերի քանակը, միավոր	Տուժած մարդկանց թվաքանակը, մարդ			
		ընդամենը	նրանցից		
			զոհվել են	վիրավորվել են	ժամանակավորապես տարահանվել են
<b>Տեխնածին աղետներ, ընդամենը</b>	<b>1835</b>	<b>533</b>	<b>192</b>	<b>337</b>	<b>4</b>
այդ թվում					
ապրանքատար գնացքների բոլոր վթարները	4	-	-	-	-
վթարներ մայրուղային խողովակաշաղ-րերում	7	1	-	1	-
հրդեհ (պայթյուն) հանքահորերում, ստորգետնյա անցումներում և մետրոպոլիտենում	1	1	-	1	-

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

	Գրանցված դեպքերի քանակը, միավոր	Տուժած մարդկանց թվաքանակը, մարդ			
		ընդամենը	նրանցից		
			գոհվել են	վիրավորվել են	ժամանակավորապես տարահանվել են
հրդեհ (պայթյուն) հեշտ բռնկվող, այրվող, պայթուցիկ նյութեր արտադրող, վերամշակող և պահող օբյեկտներում	5	4	-	4	-
տրանսպորտային ուղիների էլեմենտների փլուզում	1	-	-	-	-
վթարներ կոմունալ գազախողովակներում	2	-	-	-	-
վթարներ արտադրական օբյեկտներում	16	-	-	-	-
հրդեհ (պայթյուն) տրանսպորտում	96	8	1	7	-
հրդեհ (պայթյուն) սոցիալ-կենցաղային օբյեկտներում	90	4	2	2	-
բնակելի, սոցիալ-կենցաղային նշանակության շենքերի և շինությունների փլուզում	35	34	1	29	4
ամբարտակների (պատնեշների, ջրարգելակների, անջրպետների) ճեղքումներ, որոնք առաջացնում են ջրածածկում և աղետալի ալիքներ	4	-	-	-	-
հրդեհ (պայթյուն) բնակելի շենքերում և շինություններում	523	34	19	15	-
տեխնածին բնույթի դժբախտ պատահարներ	65	74	56	18	-
այլ վթարային իրավիճակներ, որոնք ուղեկցվում են ճառագայթման աղբյուրների, պայթուցիկ սարքերի և այլնի հայտնաբերումով	7	-	-	-	-
փլուզում հանքախորշերում, թունելներում	1	2	2	-	-
հրդեհ ենթակայաններում	22	-	-	-	-
հրդեհ (պայթյուն) արտադրական օբյեկտներում	59	9	-	9	-
այլ վթարներ (աղետներ) ավտոճանապարհներին	52	146	55	91	-
տեխնածին այլ աղետներ	845	216	56	160	-

2005թ. ընթացքում արտակարգ իրավիճակների վերացման աշխատանքների իրականացման նպատակով պատրաստվել և ուսուցանվել է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգի 1723 ղեկավար և մասնագետ: